

## ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԼԵՉՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ

ԽՏԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Օգոստոս 2024

Վենետիկի Պո-Արաքս Մշակութային Ընկերակցության, Վենետիկի “STUDIUM MARCIANUM” Հաստատության հետ գործակցաբար, կազմակերպած Հայ Լեզուի եւ Մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացը **տեղի պիտի ունենայ Օգոստոս 1-17: Քննությունները՝ Օգոստոս 17-ին:**

**ԺԱՄԱՆՈՒՄ՝ Յ ու լ ի ս 3 1 -ին (արձանագրություններ), ՄԵԿՆՈՒՄ՝ Օգոստոս 18-ին\*:**

\*կամ 19-Օգոստոսին անոնց համար որ կը փափաքին մասնակցի Վերափոխման Ս. Պատարագին h  
U. Ղազար:

**ԴԻՄՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԺԱՄ՝ Ապրիլ 20:**

**Դասընթացը ունի չորս մակարդակ՝** բացարձակ սկսնակներէ մինչեւ յառաջադէմներ:

Դասերը տեղի կ'ունենան ամէն օր, **օրը հինգ պահ՝ առաւօտեան:**

**Դասընթացի տեւողութիւնը** յարանային ուսուցման 65 ժամէ կը բաղկանայ:

Դասերուն ներկայութիւնը **ՊԱՐՏԱԳԻՐ** է: Մասնակցութեան համար պահանջուած **նուազագոյն տարիքն է 18**, թէւ դասընթացի վարիչը կրնայ բացառել ծնողքին գրաւոր հաւանութեամբ: Դասերը տեղի կ'ունենան STUDIUM MARCIANUM-ի գլխաւոր շէնքին մէջ՝ <https://www.seminariovenezia.it/cms/galleria/il-seminario/>: Դիմումները պետք է կատարուին ԱՆՁԱՄԲ եւ ԳՐԱԲՈՐ, նշելով միշտ ՀԵՌԱԽՕՍԻ համար մը եւ ԵԼԳՐԱՅԻՆ (E-Mail) հասցէ մը:

Դասընթացքին զուգահեռ տեղի կ'ունենան մշակութային ձեռնարկներ՝ մասնագիտական դասախօսութիւններ (ծրագիրը յայտարարելի՝ գարնան վերջերը), վենետիկեան այցեր, Վերափոխման Ս. Պատարագին եւ Խաղողօրհներէին մասնակցութիւն Ս. Ղազարու Մայրավանքին մէջ: ՓՎՓԱԶՈՂՆԵՐՈՒԹՅՈՒՆ, կէսօրէ վերջերը, ՁՐԻԱԲԱՐ ՊԻՏԻ ԱԲԱՆԴՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒԴՈՒԿԻ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ

**Արձանագրութեան սակն է՝ 850 €** կամ համապատասխանը՝ տարարժեքով ըստ օրուան սակին: Այս գումարին **800 Եւրոյի բաժինը** պետք է վճարուի կանխաւ՝ մինչեւ **Ապրիլ 20**: Այս կանխավճարը պետք է կատարուի դասընթացի ընդունուելէն սկսեալ 15 օրուան ընթացքին, դրամատնային փոխանցումով կամ **միջազգային արժէք ունեցող փոխազրով (cheque):** 20 Ապրիլէն վերջ, իբրեւ կանխավճար պետք է դրկուի **1000 Եւրոյ** մինչեւ ՅՈՒՆԻՍԻ 30ը, որ **արձանագրութեան համար վերջին պայմանաժամն է:** Արձանագրութեան մնացեալ մասը **ՊԵՏՔ ԵՒ ՎՃԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ՄՈՒՏՔԻ ՕՐԸ** հնչուն գումարով կամ միջազգային ունեցող փոխազրով: **ՎԱՐԿԱԹՂԱՅԻՆ** վճար (Credit card) **չ'ընդունուիր:**

10% գեղչ մը կը կատարուի անոնց՝ որոնք նախապէս լաւ արդիւնքով մասնակցած են դասընթացքին, գոնէ երկու անգամ: Նոյն գեղչը կը կատարուի նաեւ միասին յաճախող մօտիկ ազգականներէն մեկուն (ծնողք, քոյր, եղբայր, կողակից): **ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԱԿԸ Ո՞՞Ց ՄԷԿ ՊԱՐԱԳԱՅԻ ԿԸ ՓՈՒՏՈՒԻ ԵՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎՃԱՐՈՒՄԸ ՈՐԵՒԷ ՊԱՏՃԱՌՈՎ ԶԻ**

**ՎԵՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ, բացի բժշկական վկայագրով հաստատուած հիւանդութեան պարագային:** Դրամատնային փոխանցումին (bank transfer) համար, յետ դիմումին ընդունելութեան՝ քարտուղարութիւնը պիտի դրկէ Պո-Արաքս Ընկերակցութեան դրամատնային հաշուի հարկաւոր տեղեկութիւնները (հաշուեթիւ, IBAN եւլն.): Նոյնպէս պիտի ուղարկուի փոստային հասցէն՝ փոխազրերու ուղարկումին համար: **Դրամատնային կամ այլ կերպի փոխանցումի բոլոր ծախսերը** դիմողին կը պատկանին:

Կ'ընձեռուի բնակութեան հնարաւորութիւն՝ Վենետիկի պատմական կեդրոնին մէջ, օժտուած՝ խոհանոցային յարմարութիւններով:

Իւրաքանչիւր **ճաշ կամ ընթրիք**, որու ծախսը պետք է ԱՆՁԱՄԲ հոգայ իւրաքանչիւր ընթացորդ, կրնայ արժել 13-18 Եւրոյ:

Կեցութեան ծախսն է՝ (31 Յուլիս-17 Օգոստոս, ներառեալ – 18 գիշեր)

✓ 1016,00 € անձ գրուի, երկու հոգինոց սենեակի մէջ: Սենեակի ներառեալ ծառայութիւններ՝ զովասարքիչ, համացանց (internet), առանձին ճեմիչ եւ լուացարան, խոհանոցային անկիւն: Սենեակին մէջ մազ չորցնող գործիք չկայ:

✓ 1448,00 € **մէկ** հոգինոց սենեակի մէջ: Սենեակի ներառեալ ծառայութիւններ՝ զովասարքիչ, համացանց (internet), առանձին ճեմիչ եւ լուացարան, խոհանոցային անկիւն: Սենեակին մէջ մազ չորցնող գործիք չկայ: Կեցութեան թեթեւ տուրք մը, Վենետիկի մէջ, 2011-էն սկսեալ, օրէնքով պարտադիր է եւ **ներառեալ է նշուած ընդհանուր սակին մէջ:**

Դասընացքի կեցութեան ծախսը կարելի չէ օրական դրութեամբ հաշուել՝ եթէ մէկը մի քանի օր նուազ պիտի մնայ: Բոլոր անոնք որ կը փափաքին նշուած թուականներէն առաջ հասնիլ կամ աւելի վերջ մեկնիլ, *այդ յաւելեալ օրերուն համար* իրենց բնակավայրը պետք է որ իրենք անձնապէս հոգան եւ գատեն վճարեն: Իսկ անոնք որ դասընացքի օրերուն իրենց կեցութիւնը անձամբ պիտի հոգան ուրիշ տեղ, կը խնդրուի որ այս պարագան շուտով հաղորդեն դասընացքի վարչութեան:

Ջերմօրէն կը յանձնարարենք փախադրամիջոցներու համար **CARTA UNICA** գեղչաքարտի գնումը, որով Վենետիկի տարածքին երթելէկի գիները աւելի քան կը տասանորդուին:

Ամէն յաւելեալ տեղեկութեան համար գրել՝ [info@padus-araxes.com](mailto:info@padus-araxes.com) հասցէին, cc: [benedettacon@gmail.com](mailto:benedettacon@gmail.com) եւ [zkybhs@gmail.com](mailto:zkybhs@gmail.com). Անհրաժեշտութեան պարագային հեռաձայնել **Երեքշաբթի եւ Հինգշաբթի** օրերը, **ԻՏԱԼԵԱՎՆ ԺԱՄՈՎ, 10.30-էն մինչեւ 13.00** հետեւեալ բջջային համարին՝ +393791330687: ԼԱԻ ՍՏՈՒԳԵԼ ՁԵՐ ԵՐԿՐԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԺԱՄԵՐՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ: Պատասխան չստանալու պատգային՝ **WhatsApp**-ով լուր մը դրկել եւ ըստ հնարին շուտով պատասխան պիտի ստանաք:

Կազմակերպութիւնը պատասխանատու չէ տպագրական պատասխական սխալներու նկատմամբ: